Ռ. Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX Դ. ՎԵՐՋ XX Դ. ՍԿԻԶԲ)

Օսմանյան կայսրությունը վաղուց ի վեր եղել է կապիտալիստական երկրների էքսպանսիայի օբյեկտ։ Սկզբնապես նրանք իրենց այդ գիտավորությունները հիմնականում իրականացնում էին Թուրքիայում միսիոներական և լուսավորական կազմակերպություններ հիմնելու միջոցով։

Իրենց պետությունների անմիջական աջակցությամբ այդ կազմակերպությունները զբաղվում էին սեփական մշակույթի ու լեզվի պրոպագանդմամբ, իրենց երկրի տնտեսական և քաղաքական շահերի հետամտմամբ՝ ձգտում էին երիտասարդությանը դաստիարակել այդ շահերին ձեռնտու ոգով։

Օգտագործելով կապիտուլացիոն ռեժիմը, XVI դ. Ֆրանսիան սկսեց Թուրքիա ուղարկել զանազան հոգևոր միաբանությունների ներկայացուցիչների։ Թուրքիայի տարածքում միսիոներական առաջին ուսումնական հաստատությունը 1583 թ. հիմնեցին ճիզվիտները[1]։ Դա Կոստանդնուպոլսի (Ղալաթիա) Սեն-Բենուա-կոլեջն էր։ Հետագայում կաթոլիկական միաբանությունները Օսմանյան կայսրության զանազան շրջաններում հիմնեցին ևս մի շարք ուսումնական հաստատություններ։ Ֆրանսիացի միսիոներների պրոպագանդան հատկապես եռանդուն բնույթ էր կրում Սիրիայում, Լիբանանում և Միջագետքում։ Ֆրանցիսկյան և ճիզվիտական միաբանությունները ոչ պակաս եռանդուն էին գործում նաև Կիլիկիայում և Թուրքիայի արևելյան վիլայեթներում։ «Փոքր Ասիայի բոլոր նշանակալից կենտրոններում,—հետագայում նկատել է Վ. Ի. Սեմյոնովը,—կան կաթոլիկական միաբանությունների միջոցներով պահվող ֆրանսիական դպրոցներ»[2]։

Ֆրանսիացիների հիմնած կաթոլիկական ուսումնական հաստատություններից բացի, Թուրքիայում բացվել էին նաև իտալական և այլ դպրոցներ։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրեին կաթոլիկ հոգևորականությունը երկրում հիմնել էր 500 դպրոց, որոնցում ուսում էր ստանում 59.414 աշակերտ[3]։ Իսկ կաթոլիկների ընդհանուր թիվը Օսմանյան կայսրությունում հասնում էր 800—900 հազարի։

Միսիոներական դպրոցների, ինչպես նաև բարեգործական և այլ հիմնարկների գործունեությանը ուղղություն էին տալիս Թուրքիայում եվրոպական տերությունների պաշտոնական ներկայացուցիչները։ 1878 թ. այցելելով Էրզրումի որբանոցը, Վ. Դուխովսկայան գրում էր, որ ֆրանսիական հյուպատոսը այստեղ աշխատող քույր-ֆրանսուհիներին «անընդհատ հիշեցնում էր», թե «նրանք կոչված են ուսուցանելու երեխաներին, օգնելու աշխատանքներին ու հիվանդներին»[5]։

Սակայն այս «մարդասիրական» հայտարարությունները նպատակ ունեին սքողել զաղութային տերությունների՝ այլասիրությունից շատ հեռու շահերը, ապահովել սեփական տնտեսական և քաղաքական ազդեցությունը Թուրքիայում։ Միսիոներները առանձնահատուկ ուշադրության էին արժանացնում Օսմանյան կայսրության ծայրամասային շրջանները, մասնավորապես Արևմտյան Հայաստանը։ Դա բացատրվում է մի շարք պատճառներով, որոնցից հատկապես ուշադրության է արժանի հետևյալ հանգամանքը՝ Օսմանյան կայսրության քրիստոնյա ճնշված, իսլամացման վտանգից ահաբեկված ժողովուրդները, որ շարունակ ենթակա էին ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործադրվող հալածանքներին ու իրավական սահմանափակումներին, որպես բռնի թուրքացումից փրկվելու միակ միջոց գերադասում էին կաթոլիկություն կամ, ավելի ուշ, բողոքականություն ընդունել։

Օգտվելով այս հանգամանքից, միսիոներները ծավալում էին իբենց պրոպագանդան, հույներին և հայերին խոստանալով, որ նոր դավանանք ընդունելու դեպքում նրանք կազատվեն հարկերից, այլևս «գյավուր» չեն կոչվի և, անցնելով մեծ տերությունների հովանավորության տակ, կփրկվեն բռնի ոչնչացման վտանգից։ Մատերնա Քյուրեն իր «Մարաշի ջարդը» աշխատության մեջ, խոսելով կաթոլիկ միսիոներների հետապնդած նպատակների մասին, ընդգծում է, որ կաթոլիկության պրոպագանդան ուղղված էր խանգարելու հայերի թուրքացմանը[6]։

Սա էլ միսիոներներին հիմք էր տալիս կարծելու, որ կայսրության՝ քրիստոնյաներով բնակեցված շրջանները դյուրին ճանապարհ են իրենց նպատակներին հասնելու համար։

Այսպես օրինակ, անգլիացի միսիոներ Գ. Յանդը, ինչպես վկայում է նրա ամերիկացի գործընկեր Սայրըս Համլինը, այն կարծիքին էր, թե «հայ ցեղը այն բաց դուռն է, որով հնարավոր է Թուրքիա մտնել»։ Պատրաստվելով ըստ ամենայնի տիրել այդ «բաց դռանը», անգլիացիներն արդեն 1701 թ. ստեղծեցին «Աստվածաշնչի տարածման ընկերություն», 1792 թ. երևան եկավ «Մկրտիչ-միսիոներների ընկերություն», 1795 թ.՝ «Միսիոներների լոնդոնյան ընկերությունը», իսկ 1800 թ.՝ «Անգլիական եկեղեցու միսիոներական ընկերությունը» և այլ ընկերություններ[8]։ Ընդ որում, հավատարիմ «ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու» իրենց ավանդական քաղաքականությանը, անգլիական գաղութարարները Թուրքիայում գործունեության ասպարեզը թողել էին ամերիկյան միսիոներներին, ակնկալելով նրանց միջոցով ձեռք բերել «համակիր և գործունյա տարր»[9]։ Այս դիտավորությամբ նրանք ամերիկացիներին օգնում էին Թուրքիայում միսիոներական դպրոցներ ստեղծելու գործում։ Այսպես, Ռոբերտ-կոլեջը բացելու համար Համլինին ֆինանսական օգնություն ցուցաբերելու նպատակով Անգլիայում կազմվեց «Թուրքիայի միսիոներությանը օգնող ընկերություն»։ Միաժամանակ, 1846 թ. Մալաթիայում հիմնվեց անգլիական միսիոներական դպրոց[10]։ Այդ տարիներին Կոստանդնուպոլսում կար երկու, իսկ ամբողջ երկրում՝ 178 անգլիական դպրոց, որտեղ սովորում էին 12800 աշակերտ[11]։ Ա. Ալպոյաճյանն այս առթիվ գրում էր. «Հակառակ անոր, որ Անգլիա առ երեւոյթ հայերով զբաղելէ քաշուած էր, սակայն Թուրքիոյ դաշտը լքած չէր։ Միայն Ռուսիոյ հետ բախում ունենալէ կղզուշանար և հայերու մէջ բնաւ չէր գործեր, բայց Պաղեստինի հրէից քարոզչութեան պատրուակով կը մնար»[12]։

Այսուհանդերձ անգլիացիների հոգևոր ազդեցությունը Թուրքիայում նշանակալից էր։

Այս իրադրությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունում այդ տարիներին հատկապես լայն գործունեություն էին ծավալել ամերիկյան միսիոներները[13]։ 1810 թ. Բոստոնում կազմակերպվեց «Օտարերկրյա կրոնական միսիաների լիազորների ամերիկյան խորհուրդ» անունը կրող բարեգործական ընկերությունը, որը Թուրքիայում իր գործունեությունն սկսեց 1820 թ., երբ

միսիոներ Ֆերնը ու Կերկնսոռը Զմյուռնիայում դպրոց և տպարան բացցին[14]։ Նրանցից հետո ժամանեցին միսիոներներ Մ. Ֆիսկը և Լ. Փարսոնսը։ 1821 թ. Մ. Ֆիսկը այստեղից մեկնեց Կահիրե, իսկ Լ. Փարսոնսը՝ Երուսաղեմ։ Անկնկալված հաջողության չհասնելով, ամերիկյան միսիոներներն իրենց կենտրոնը փոխադրեցին Հալեպ։ 1823 թ. Բեյրութում հիմնավորվեց Վիլյամ Գուդելը։ Ամերիկյան միսիոներների գործունեությունը Հայաստանում ուժեղացավ XIX դ. 30-ական թվականներից։ Վաճառքի նոր շուկաներ ձեռք բերելու ձգտող ամերիկյան բուրժուազիան 1830 թ. Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որը ԱՄՆ-ին տալիս էր կապիտուլյացիոն իրավունքներ և ճանաչում նրան որպես «Թուրքիայում ամենամեծ արտոնությունների իրավունք ունեցող պետություն»[15]։ Օգտվելով դրանից «Օտարերկրյա կրոնական միսիաների գործով լիազորների ամերիկյան խորհուրդը» 1831 թ. Կոստանդնուպոլիս ուղարկեց Վ. Գուդելին։ 1832 թ. այստեղ եկան նաև մինչ այդ Արևմտյան Հայաստանում ճանապարհորդող միսիոներներ Դուայթը և Սմիթը[16]։ Նրանց ջանքերով 1834 թ. Կոստանդնուպոլսի Պերա թաղամասում հիմնադրվեց առաջին դպրոցը։ Շուտով ամերիկյան միսիոներների ցանցը այնքան ընդլայնվեց, որ XIX դ. 40-ական թթ. միայն Կոստանդնուպոլսում գործում էր բողոքականների 5 դպրոց[17]։ 1834 թ. միսիոներները հիմնավորվեցին Իզմիրում, Բուրսայում, Տրապիզոնում, 1845 թ. ամերիկյան միսիոներները թափանցեցին Մարաշ և Զեյթուն, իսկ 1877 թ.՝ Այնթապ, 1848 թ. միսիոներական կենտրոններ բացվեցին նաև Էրզրումում[18]։ «Մի ժամանակից ի վեր,—գրում էր Ա. Երիցովը,—առատաձեռնորեն տրված վարկերի, ինչպես նաև այստեղի միսիոներական հյուպատոսական գործակալությունների նկատմամբ Հյուսիս-ամերիկյան նահանգների ցուցաբերած հովանավորության շնորհիվ քաղաքում և մի քանի հարևան գյուղերում ջանադրաբար զարգանում է բողոքականությունը»[19]։

Ամերիկյան կառավարությունը սատարելով միսիոներների հաջողությանը, հույս ուներ Արևմտյան Հայաստանում ամրապնդել իր ազդեցությունը և դրանով իսկ խոչընդոտել հայերի միջավայրում ռուսական կողմնորոշման զարգացմանը։

Ամերիկյան բողոքականները ամբողջ Փոքր Ասիան ծածկեցին դպրոցների ցանցով, որտեղ քրիստոնյաների երեխաները դաստիարակվում էին բողոքականության ոգով։ Միսիոներների պառակտչական գործունեության հետևանքով 1847 թ. հոկտեմբերի 3-ին հայ-բողոքականները անջատվեցին լուսավորչականներից և առանձին համայնք կազմեցին[20]։

Ինչ ասել կուզի, Օսմանյան կառավարությանը ձեռնտու էր խորացնել հայերի կրոնական անմիաբանությունը՝ նրանց միասնականությունը պառակտելու միջոցով աղգային-աղատագրական շարժումը թուլացնելու նկատառումով։

Այդ իսկ պատճառով սուլթան Աբդուլ Մեջիդը 1850 թ. նոյեմբերի 27-ի իր ֆերմանով հաստատեց ինքնուրույն բողոքական համայնքի ստեղծումը, նրանց թույլատրելով ունենալ հոգևոր ղեկավար, որին ենթարկվում էին նաև կայսրության մյուս բողոքականները (ասորիներ, հույներ և այլք)[21]։

Բողոքական համայնքի պաշտոնական ճանաչումը նշանակում էր բողոքական եկեղեցուն ավելի մեծ հնարավորություն տալ հույների և հայերի շրջանում իր ազդեցությունը տարածելու համար (դպրոցական, բարեգործական հիմնարկների ցանցի ընդլայնում, ինչպես նաև հիվանդանոցների, որբանոցների հիմնում, որոնք լայն տարածում ստացան հատկապես 1894—96 թթ. հայերի կոտորածներից հետո)։ Ամերիկյան կառավարությունը, ինչ խոսք, ըստ ամենայնի աջակցում էր իր միսիոներներին՝ այդ քաղաքականության իրականացման։ գործում։

Էրզրումից հետո ամերիկյան բողոքական միսիայի ներկայացուցիչները երևացին Բիթլիսում[22]։ Միաժամանակ սկսվեց նրանց «քարոզչությունը» Խարփութի հայերի շրջանում։ Նրանց գործունեության սկիզբը այստեղ վերաբերում է 1852 թ., երբ Դենմորը Խարփութում հիմնեց բողոքական եկեղեցի և դպրոց։ Հատուկ ուշադրության են արժանի միսիոներներ Հյուլլերն ու Ալենը, որոնց 1859 թ. Խարփութում հիմնած աստվածաբանական դպրոցը հետագայում տվեց Թուրքիայում «ամերիկանիզմի» տարածմանը մեծապես աջակցած մի շարք միսիոներներ[23]։ Քիլիսայում, Մարաշում, Ուրֆայում և այլ քաղաքներում բողոքականության պրոպագանդման գործում մեծ դեր խաղաց Այնթապի միսիան։ 1855 թ. վերջինիս միացավ նախկինում Սիրիական միսիայի մեջ մտնող Անտիոքի մարզը՝ Հալեպից մինչև Քեսաբ, որտեղի քրիստոնյա բնակչության մեջ մեծ թվով թուրքախոս հայեր կային։ Սիրիայում միսիայի ընդլայնումը հանգեցրեց «Հարավ-հայկական միսիայի» ստեղծմանը, որի մեջ մտան Այնթապի, Մարաշի, Անտիոքի, Հալեպի և Ուրֆայի կայանները։ Ադանան և Հաջնը ունեին առանձին կենտրոններ։ 1860 թ. «Հարավ-հայկական միսիայի» մեջ մտան այլ քաղաքների միսիոներական կայանները և այն կոչվեց «Կենտրոնական թուրքական միսիա»։

Բերված փաստերը ակնհայտորեն վկայում են, որ արդեն XIX դ. 50-ական թթ. սկզբին Փոքր Ասիայի Արևելյան ամբողջ տարածքը ծածկված էր միսիոներական կենտրոնների ցանցով, որտեղից ամերիկյան միսիոներները տարածում էին իրենց պրոպագանդան, քրիստոնյաների շրջանում ավելի ու ավելի ընդլայնելով սեփական ազդեցության ոլորտը։ Այդպիսի կենտրոնների թիվը շուտով հասավ 115-ի (որոնցից 5-ը գլխավոր կենտրոններ էին, իսկ 110-ը՝ դրանց բաժանմունքները)։ Նրանցից գրեթե յուրաքանչյուրն ուներ իր տպարանը[24]։ Արևելյան միսիան բացել է 160 դպրոց, որոնք ունեին 4320 աշակերտ, 208 ուսուցիչ։ Վերջիններիս մեջ կային ոչ միայն ամերիկացիներ, հույներ, այլև տեղացի բողոքական հայեր։ Միսիան ուներ 36 եկեղեցի[25]։ Նշանակալից նյութական միջոցների շնորհիվ ամերիկյան միսիոներները թափանցեցին Արևմտյան Հայաստանի բոլոր անկյունները։ Նրանց գործունեության շնորհիվ 1822—1885 թթ. բողոքականություն ընդունածների թիվը այստեղ հասավ 45 հազարի[26]։ Առանձին կենտրոնների գործունեությունը կոորդինացնելու նպատակով կենտրոնական միսիոներական ընկերությունը գումարում էր ամենամյա համագումարներ, որոնք հերթականությամբ անց էին կացվում միսիայի 5 գլխավոր կենտրոններում։ Այդ համագումարների կազմակերպման համար հատկացվում էին խոշոր գումարներ։ Այսպես, օրինակ, 1885 թ. Էրզրումում կայացած համագումարի համար ծախսվեց 10 հազար ռուբլի։ Ընդորում մինչ այդ Թուրքիայում բողոքական պրոպագանդայի նպատակով արդեն ծախսվել էր 25 միլիոն ռուբլի[27]։ Այդ գումարները տրամադրվում էին ինչպես անհատ «բարեգործների» կողմից, այնպես էլ արտասահմանյան կառավարական աղբյուրներից։ Բողոքական միսիոներների գործունեությանը ըստ ամենայնի աջակցում էին ԱՄՆ-ի կառավարող շրջանները։ «Արևելքում միսիաները օգտվում են Կոստանդնուպոլսում և Թեհրանում իրենց դեսպանների աջակցությունից»,—գրում էր Ա. Մ. Կոլյուբակինը[28]։

Իրենց դրամական հսկայական միջոցներով, օգտագործելով գիտելիքների նկատմամբ բնակչության ձգտումը, բողոքական կազմակերպությունները Թուրքիայում ընդլայնված՝ սրրոպագանդիստական գործունեություն ծավալեցին։ Բավական է ասել, որ միայն 1888—1900 թթ. Ամերիկայի միսիոներները հրատարակել և Թուրքիայում տարածել են կրոնական բովանդակությամբ տարբեր լեզուներով 50000 գիրք և 100000 բրոշյուր։ Պրոպագանդիստական նպատակներով նրանք հրատարակում

էին 13 պարբերական (այդ թվում և մանկական, հայերեն «Ավետաբեր» ամսագիրը)։ Իրենց գործունեության սկզբից մինչև 1900 թ. միսիոներները ԱՄՆ-ից Թուրքիա են առաքել 7 միլիոն գիրք, ընդ որում նրանց գործունեության ամբողջ հատկացումների գումարը հասնում էր 10 միլիոն դոլարի (որից միայն վերջին տաս. տարում ծախսվել էր 700000 դոլար)[29]։

Անդրադառնալով միսիոներների բուն նպատակներին, Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք» թերթը գրում էր. «Միսիոներները ամեն կերպ աշխատում են մեռցնել հայոց մէջ հայրենիքը և ազգը սիրելու բնական զգացումները։ Նոքա հայերէն տառերով մեզ համար 300-ից աւելի գիրք ունին տպագրած, բայց դոցանից և ոչ մեկի մէջ կայ «ազգ» և «հայրենիք» բառերը»[30]։

Գիտության ծարավ մարդկանց ձեռքը կրոնական գրականությունխցկելով նկատում էր ռուս հեղինակներից մեկը, միսիոներները «հողագործության, արդյունաբերության, հիգիենայի և կենսագործունեության այլ բնագավառների օգտակար դիտելիքների վերաբերյալ հանրամատչելի երկեր չեն հրատարակում։ Այդ իսկ պատճառով, եզրակացնում է նա, բողոքական միսիոներների պրոպագանդան ընդհանրապես շատ քիչ հաջողություն ունի[31]։ Եվ դրա բացատրությունը պարզ է՝ միսիոներական կազմակերպությունների գործունեությանը առաջադրվում էր ոչ թե բնակչության շահերով, այլ իրենց դոգմաները տարածելու և խարված մարդկանց իրենց հավատին բերելու դիտավորությամբ, այդ նպատակին ծառայեցնելով ամեն մի միջոց՝ ընդհուպ նրանց առանձին խմբերի և հոգևորականության միջև տարաձայնությունների հրահրումը։ Անդրադառնալով «ամեն ինչ քանդելու ձգտող անկոչ բարեփոխիչների» գործունեությանը Ա. Կոլյուբակինը դիպուկ նկատում էր, որ միսիոներները փոխարենը նոր ոչինչ չեն ստեղծում և որ այդ իսկ պատճառով, նրանց ջանքերը ժողովրդի մեջ ոչ հազվադեպ հակառակ արդյունքն են տալիս[32]։ Նայած պայմաններին այդ պայքարը զանազան ձևեր էր ստանում։ Այսպես, օրինակ, ի պատասխան Ներսիսյանի անվան դպրոցի (խաս. գյուղում) ուսումնական ծրագրում ամերիկացիների կողմից Լանկաստերի ուսմունքը մտցնելուն, որն ընկալվեց որպես բողոքականության պրոպագանդա, դպրոցը փակվեց։ Հայտնի են բնակչության միսիոներների և նրանց կամակատարների դեմ ուղղված ավելի ակտիվ գործողություններ։ Այսպես, 1848 թ. զեյթունցիները դիմադրեցին միսիոներներին, որոնք փորձում էին այստեղ դպրոց հիմ-

նել։ Ոչ հաղվադեպ, լինում էր, և այնպես, որ լուսավորչական հայերը ծեծում էին բողոքականություն ընդունած ռենեգատներին։ Օրինակ, բողոքականություն ընդունած մի հայ քահանա թաքնվում էր ամերիկացի միսիոներ Սմիթի տանը։ Հայերը պահանջեցին նրան իրենց հանձնել և երբ մերժում ստացան, սանդուղքներ դնելով՝ պատերով մագլցելով, բակ մտան, ապա կոտրելով լուսամուտը, ներխուժեցին տուն, գտան քահանային, ինքնակամ պատժեցին նրան ու տարան իրենց հետ[33]։

1845 թ. ամերիկյան միսիոներները փորձում էին թափանցել Մարաշ՝ այնտեղ դպրոց հիմնելու նպատակով։ Սակայն հանդիպելով տեղի բնակչության դիմադրությանը, նրանք ստիպված եղան հեռանալ քաղաքից։ Բողոքականություն ընդունած յոթ հայեր ծեծի ենթարկվեցին։ Մարաշ թափանցող միսիոներների ձեռնարկած փորձերը ձախողվեցին նաև 1850—1851 թթ.[34]։ Այս փաստերը վկայում են ամերիկյան միսիոներների գործունեության դեմ հայ բնակչության աճող դիմադրության մասին։ Այդ գործունեությունը հատկապես շարժում էր լուսավորչական հոգևորականության դժգոհությունը՝ անմիջականորեն դիպչելով նրա շահերին։ Եվ հայ հոգևորականությունը պատասխանում էր միսիոներներին ամեն կերպ, ինչպես կարող էր։ Հայտնի են Կոստանդնուպոլսի պատրիարքի՝ քաղաքի Բեբեք թաղամասում ամերիկյան դպրոցի բացմանը խանգարելու փորձերը։ Գիտենալով, որ միսիոներները օգտվում են քաղաքային չքավորության ծանր կացությունից ու նրանց իրենց ցանցը գցում, Մաթևոս պատրիարքը 1841—1848 թթ. աղքատներին օգնելու նպատակով հանգանակություն կազմակերպեց և կարողացավ այդպիսով լուսավորչականության գիրկը վերադարձնել ոչ քիչ թվով «ազգային եկեղեցուն» հարկադրաբար «դավաճանածների»[35]։ Դրանից բացի, նույն նպատակով հայ հոգևորականությունը ձեռնարկում էր ուսումնական իր հաստատությունների ցանցի ընդլայնմանը։ Ընդ որում, կարևոր է այն հանգամանքը, որ ամերիկացիների դպրոցների նման հաստատություններ կառուցելու իրենց միջոցների պակասը լուսավորչական գործիչները ջանում էին կոմպենսացնել սովորողների ուսման և կենցաղի ավելի լավ կազմակերպմամբ։ «Ամերիկյան դպրոցը առաջին իսկ հայացքից զարմացնում է իր առանձնահատուկ կնիքով, որը նրան շեշտակի տարբերում է աղքատ կահավորված և պակաս ապահովված, բայց, այդուհանդերձ, ավելի հաճելի տպավորություն թողնող ազգային դպրոցից»։ Սա վկայում է այն մասին, որ ազգային դպրոցները «շարժում էին ոչ միայն հայ-լուսավորչականների,

10—635

այլև հաճախ՝ բողոքականների համակրանքը»[36]։ Դրանում իրենց ոչ փոքր վաստակն ունեին նաև դպրոցական ուսուցիչները, որոնք իրենց սաներին դաստիարակում էին հարազատ ժողովրդի, նրա ավանդույթների նկատմամբ սիրո ու նվիրվածության ոգով։ Ընդ որում նշենք, որ չնայած ուսուցիչներին իրենց կողմը գրավելու բազմաթիվ փորձերին, այդ թվում և բողոքական վերնախավի համագումարներին հրավիրելուն, նրանք բոյկոտում էին այդ համագումարները՝ բացահայտելով դրանց նպատակներն ու էությունը։

Փաստերը վկայում են, որ արդեն XIX դ. կեսերին ժողովուրդը ոչ միայն տարերայնորեն էր դիմադրում միսիոներների շարժմանը, այլև առկա էին այդ շարժման կազմակերպման որոշակի միտումներ։ Այսպես, 1846 թ. Կոստանդնուպոլսում ստեղծվեց «Համազգային ընկերություն», որը նպատակ էր դնում պայքարել հայերին բողոքականության հավատադարձելու դեմ։

Այդ կազմակերպության անդամները ջանում էին ամրացնել ժողովրդի հավատը լուսավորչական եկեղեցու նկատմամբ, ուժեղացնել նրա ազգային զգացումները և խորացնել սերը հայ ժողովրդի անցյալի ու նրա մշակույթի վերաբերմամբ։ Նրանք ժողովրդին բացատրում էին, թե ինչ վնաս է բերում ռենեգատությունը իրենց ազգային շահերին։

Չնայած դիմադրությանը, ամերիկյան միսիոներներին հաջողվում էր որոշակի գործունեություն ծավալել իրենց կենտրոնների միջոցով, որոնց թիվը 1869 թ. հասել էր 21-ի, նույն 1869 թ. Օսմանյան կայսրությունում կար ամերիկյան բողոքականների 185 դպրոց[37], ապա 1884 թ. դրանց թիվը հասել էր 374-ի[38]։ Նրանք իրենց գործունեությունը հատկապես ուժեղացրին առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Մինչև 1910 թ. երկրում գործում էր 430 ուսումնական հաստատություն, որոնցից 6-ը բարձրագույն դպրոց՝ 1219 ուսանողներով, 29 միջնակարգ դպրոց՝ 3012 աշակերտներով։ 1914 թ. Օսմանյան կայսրությունում արդեն գործում էր բողոքականների 675 դպրոց՝ 34317 աշակերտներով[39]։

Ընդ որում առաջին համաշխարհային պատերազմի սկզբին երիտթուրքերի կողմից կապիտուլացիաների չեղյալ հայտարարվելու հետևանքով օտարերկրյա, այդ թվում ամերիկյան դպրոցների մեծ մասը դադարեցրեց իր գործունեությունը։ Սակայն պատերազմի ավարտից և Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո (1918 թ.) Անտանտի պետությունները վերականգնեցին իրենց արտոնությունները և վերաբացեցին այդ դպրոցները։ Սակայն ազգային պատերազմի ավարտից

հետո քեմալականները կրկին վերացրին նշված արտոնությունները՝ Թուրքիայի սուվերենության հետ դրանց անհամատեղելիության պատճառաբանությամբ։

Լոզանի 1923 թ. պայմանագրում արտասահմանյան դպրոցների հարցը չարծարծվեց։ Բայց Իսմետ-փաշայի նամակում, որտեղ նա հատուկ անդրադառնում էր այդ խնդրին, խոստում էր տրվում պահպանել մինչև 1914 թ. հոկտեմբերի 30-ը եղած դպրոցները, պայմանով, որ դրանք անցնեն Թուրքիայի լուսավորության մինիստրության ենթակայությանը։ Միաժամանակ նշում էր, որ այդ ենթակայությունը չընդունող դպրոցները կփակվեն։ Բացի այդ, առաջարկվում էր օտարերկրյա դպրոցներում պարտադիր դարձնել Թուրքերենի և Թուրքիայի պատմության ուսուցումը և արգելել ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումը[10]։

1914 թ. Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան բողոքականների դպրոցներում կրթության համակարգն ընդգրկում էր ուսուցման բոլոր աստիճանները՝ մանկապարտեզից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Այնտեղ ուսուցումը տարվում էր ամերիկյան համապատասխան ուսումնական հաստատությունների ծրագրերով։ Միաժամանակ բողոքականների դպրոցներում, անգլերենից բացի, անցնում էին մայրենի լեզու, ազգային գրականություն և պատմություն։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կոլեջներում անցնում էին համընդհանուր պատմության լրիվ դասընթաց և այդ այն դեպքում, երբ Թուրքական լուսավորության մինիստրությունը այդ դասընթացից հանել էր Ֆրանսիական 1789—1794 թթ. հեղափոխությունից հետո ընկած ամբողջ ժամանակաշրջանը՝ Օսմանյան կայսրության ավատակղերական միապետության շահերին չհամապատասխանելու պատճառով։

Ցանկանալով շահել, օրինակ, հայ ժողովրդի համակրանքը, հակառակ Աբդուլ Համիդի բռնակալական արգելքներին, երբ թույլ չէր տրվում նույնիսկ արտաբերել «հայ» բառը, շատ կոլեջներում ոչ միայն հայոց լեզուն, այլև Հայաստանի պատմություն էին ուսումնասիրում։ Չնայած սուլթանական գրաքննությունը բծախնդրորեն հսկում էր պարբերական մամուլի նյութերը, արգելում պատմական ուսումնասիրությունները և եվրոպական դասականների երկերը, այդ կոլեջներում ստեղծվում էին գրադարաններ, որտեղ հավաքվում էին ձեռագրեր, հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով պարբերական հրատարակություններ[41]։

Միսիոներական դպրոցների սովորողների հիմնական մասը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն էին։ Դրա պատճառը այն էր, որ Թուրքիայի մուսուլման հոգևորականությունը հերձվածողական էր համարում «անհավատներից» որևէ բան փոխառելու միտքը, Թուրքերին արգելում էր հաճախել այդ դպրոցները։

Սակայն XIX դ. վերջերից «տնտեսական և քաղաքական հայտնի գործոնների ազդեցության տակ այդ դրությունը սկսեց փոխվել»[42]։ Եվ եթե 1890 թ. օտարերկրյա դպրոցներում սովորողների մեջ Թուրքերը կազմում էին ընդամենը 1%, ապա 1911 թ. նրանց քանակաչափը հասավ 56%-ի[43]։ Այդ պատճառով էլ միսիոներական դպրոցների թիվը ավելացավ այն շրջաններում, որտեղ «հայտնի տնտեսական և քաղաքական գործոնները» հատկապես զգալի էին։

«Անհավատների» մոտ առաջինը սովորելու գնացին արտոնյալ դասերից սերվածները։ «Լուսավորության պատմությունը Թուրքիայում» հինգհատորյա աշխատության հեղինակ Օսման Էրգինը գրում էր, որ օտարերկրյա դպրոցների Թուրք սովորողները հիմնականում այն երեխաներն են, որոնց ծնողները քաղաքական ու սոցիալական բարձր դիրքեր են գրավում»[44]։ Ռուս հետազոտող Ն. Կարինցևը 1910 թ. նշում էր, որ «...այդ հոգևոր և աշխարհիկ դպրոցներն են ընդունվում ոչ Թե բնակչության լայն զանգվածների, այլ միայն նրա ընտիր խավերի երեխաները»[45]։

Օտարերկրյա ուսումնական հաստատություններն ավարտածները դառնում էին առ եվրոպական տերությունները կողմնորոշված պետական պաշտոնյաներ, առևտրականներ, դիվանագետներ։

Ամերիկյան ուսումնական հաստատություններից մեծ ճանաչում էր ստացել 1863 թ. Կոստանդնուպոլսում Ս. Համլինի բացած «Ռոբերտ կոլեջը»[46]։ Ուսուցումն այնտեղ տարվում էր երկու աստիճանով, առաջին աստիճանը տալիս էր ընդհանուր, երկրորդը (չորսամյա ժամկետով) մասնագիտական պատրաստվածություն։ Կոլեջում անցնում էին անգլերեն, ֆրանսերեն և մայրենի լեզուներ, կրոն, ինչպես նաև թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, ճարտասանություն, քաղտնտեսություն, քաղաքացիական իրավունք, արվեստից պատմություն, բնական գիտություններ, միաժամանակ, ինչպես վերը նշվեց, ուսումնասիրում էին ազգային գրականություն և պատմություն[47]։ «Ռոբերտ կոլեջ» ընթացավարներն իրավունք ունեին ընդունվել ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները։

Կոլեջը կարևոր դեր էր խաղում բողոքականության պրոպագանդ-

ման, ինչպես նաև Թուրքիայում ամերիկյան ազդեցության տարածման համար հասու կադրերի պատրաստման գործում։

Երկրորդ խոշոր ամերիկյան ուսումնական հաստատությունը Կոստանդնուպոլսի 1871 թ. հիմնված իգական կոլեջն էր (1932 թ. այն միացվեց «Ռոբերտ կոլեջին»)։ Այս երկու խոշոր ուսումնական հիմնարկներից բացի, 1879 թ. արական կոլեջներ բացվեցին Տարսոսում և Զմյուռնիայում։

Ամերիկյան բողոքականները կարևոր նշանակություն էին տալիս նաև տեխնիկական կրթությանը։ Այսպես, Ուրֆայում կար արհեստագործական ինստիտուտ[48], որտեղ ուսուցանում էին դարբնագործություն, մեքենագործություն և այլ արհեստներ։ «Եփրատ կոլեջը» (բացված էր 1878 թ., Խարբերդ քաղաքում) ուներ ժամանակակից մեքենաներով սարքավորված արհեստանոցներ[49], 1912 թ. «Ռոբերտ կոլեջին» կից բացվել էր ինժեներական ֆակուլտետ։ Այս ուսումնական հաստատություններից բացի Թուրքիայում գործում էին ամենատարբեր բնագավառների մասնագետներ պատրաստող ևս մի քանի կենտրոններ։ Բեյրութի կոլեջը ուներ բժշկական ֆակուլտետ[50]։ Հատուկ բժշկական կոլեջ էր բացվել Այնթապում[51]։ Մի քանի կոլեջներ ունեին առևտրական, հաշվապահական գործի և այլ ճյուղերի մասնագետների պատրաստման բաժանմունքներ։ Այսպես, օրինակ, 1891 թ. Իզմիրում հիմնադրված «Ինթերնեյշընըլ կոլեջը» ուներ վաճառականական բաժանմունք։ Բերված տվյալները վկայում են, թե ինչպիսի կարևոր նշանակություն էր տրվում Թուրքիայում ամերիկյան էքսպանսիային աջակցող կադրերի պատրաստմանը։

Այդ կոլեջների դասախոսական կազմը համալրված էր ամերիկացիներից, սակայն կային նաև թուրքեր, հայեր, հույներ՝ Ամերիկյան ուսումնական հաստատություններում աշխատում էին 750 ամերիկացի և 2300 տեղացի ուսուցիչներ[52]։

Ամերիկյան դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 40 հազարի։ XIX դ. դրանց հիմնական զանգվածը կազմում էին հայերը և, ընդհանրապես, քրիստոնյաները։ Ըստ հնարավորին մեծ թվով սովորողներ ընդգրկելու մտադրությամբ ամերիկյան միսիոներները մտցրել էին անվճար ուսուցման համակարգ։ Դպրոցներում կային նաև գիշերօթիկներ, որբանոցներ, սրանց սպասարկող հիվանդանոցային բաժիններ։ Անկախ կրոնական պատկանելությունից կարիքավոր երեխաներին տրվում էր կրթաթոշակ։ Հատկանշալի է, որ իրենց ծրագրերը կազմելիս նրանք հաշվենկատորեն օգտագործում էին ժողովրդի տնտեսական և

քաղաքական ծանր վիճակը։ «Կարելի է ամենայն վստահությամբ ասել, որ ծայրահեղ կարիքը, հայերի միջավայր թափանցած կրթության անհրաժեշտության գիտակցության հետ մեկտեղ նրանց ստիպում է իրենց երեխաներին տալ ամերիկյան դպրոցներ»[53]։

Սրանից բացի, ամերիկյան միսիոներներն իրենց գործունեության մեջ հատուկ տեղ էին հատկացնում դեմագոգիային, այն ամենին, ինչը XIX դ. աղբյուրները անվանում են «պրոպագանդա»։ Խոսքը վերաբերում է մարդկանց տվյալ միսիոների քարոզած կրոնին դավանաղարձելու նպատակով իրագործված «պրոպագանդային»։

«Միսիայի ուսումնական գործի բոլոր դրույթների և միջոցների միջով,—նշում էր Ա. Կոլյուբակինը,—կարմիր թելի նման անցնում է պրոպագանդայի ձգտումը և անբարյացակամ վերաբերմունքը այլ դավանանքների նկատմամբ։ Նրանց գործունեությանը ի մոտս ծանոթանալը մեզ բերում է այն եզրակացության, որ պրոպագանդան միսիոներների ոչ միայն գլխավոր, այլև գրեթե բացառիկ նպատակն է, իսկ ամբողջ դպրոցական գործը սոսկ միջոց է այդ նպատակին հասնելու համար»[54]։ Եվ հետո, խոսելով այն մասին, թե պրոպագանդան ամերիկյան միսիոներների հիմնական նպատակն է, հեղինակը հիշատակում է անհավանական ցինիզմի այսպիսի մի փաստ. «Խարփութի կոլեջում ոչ բողոքականները փոքրաթիվ են, իսկ բարձր դասարաններում՝ գրեթե բոլորովին չկան, քանի որ միսիոներները ամեն ինչից բարձր դասելով պրոպագանդայի գործը, սովորաբար մինչև դասընթացի վերջը չեն հասցնում այն երիտասարդներին, որոնք հավատարիմ են մնում իրենց դավանանքին»[55]։

Այս իմաստով բնութագրական է ամերիկյան դպրոցներից մեկի մի սովորողի հետևյալ նամակը. «... ինչ վերաբերում է ինձ բողոքականության դավանաբերելուն, այդ մասին դու մի անհանգստանա,—նշում էր նամակում,— միսիոներների համակրանքին արժանանալու համար ես նրանց հավաստիացնում եմ, թե սիրում եմ բողոքական հավատքը և հոգով բողոքական եմ։ Բայց ես ու ընկերներս այդպես ենք վարվում քաղաքական նկատառումամբ, այլապես մեզ դժվար կլիներ ստանալ գիտությունների դասընթացը. ես երբեք չեմ դավաճանի իմ հայրերի հավատին»[56]։ Հայերի ժամանակավոր և որոշակի նկատառումներով դավանափոխվելու մասին «Երևակ» ամսագիրը գրում էր. «Արեւելեան քրիստոնեայները իրենց նախնիքներէն սովրած հաւատքն դիւրաւ չէն թողուր եւ բողոքականութիւնը անոնց մէջ պարագայի կրօնք մըն է. եւ այս կրօնքիս հետեւողները առ ժամանակեայ բողոքական են, պաշտ-

պանութեան կարօտ ըլլալնին, ... կամ տուրքերնին թեթեմայ, կամ իրենք հարստանալով իրենց բաժնին ինկածը վճարելու կարող ըլլան նէ դարձեալ իրենց առաջին հաւատքնին կը դառնան»[57]։

Ամերիկյան միսիոներները չէին թաքցնում իրենց նպատակները։ Այսպես, 1855 թ. Թոքաթում բացված դպրոցի հիմնադիր Վան Լեննեպը իր օրագրում գրում էր. որ դպրոցը կոչված է պատրաստել երիտասարդությանը՝ կրոնին ծառայելու համար։ Նկատի առնելով երկրում լուսավորական գործի վիճակը, նրանք նպատակահարմար էին գտնում դպրոց ընդգրկել «բոլոր խոստումնալից երիտասարդներին», ընդ որում նախապատվություն տալով նրանց, ովքեր «մտավորական կարողութիւններով, իրենց բարոյականով եւ կրոնական նկարագրով» կարող էին ապացուցել, թե իրենք իրոք կոչված են այդպիսի կարևոր գործունեության համար։ Ընդամին, Վան Լեննեպը ընդգծում է, որ «կասկածելի նկարագիրով եւ ունակութիւններով երիտասարդներ», որոնք հարմար չեն՝ կրոնական գործունեության նախապատրաստվելու համար, դպրոցից աղատ են արձակվում, քանի որ նրանք չեն կարող տեղ ունենալ «քաջալերիչ կրօնասիրութեամբ տոգորուած երիտասարդներու՝ հետ»[58], ավելի պարզ ասած, նրանց կողքին, ովքեր պատրաստ՝ են՝ ամեն ինչ զոհել բողոքականության տարածման նպատակին։ Պետք է՝ ասել, որ այդպիսիների թիվը առանձնապես մեծ չէր։ Դա զարմանալի չէ, բողոքականների դպրոցները սկզբնական շրջանում քիչ էին տարբերվում բուն միջնադարյան ուսումնական հաստատություններից. «Աշակերտների պարապմունքների, ինչպես նաև հանգստի բոլոր ժամերը խստիվ բաշխված են, ուրախ, աղմկոտ խաղերը վտարված։ Ամեն ինչ պետք է կատարվի խստաբարո և լուրջ, ամեն ինչում ակնհայտ է հայերի ազգային բնավորության, նրանց ապրելակերպի և սովորությունների անհարիր պեդանտիզմը»[59]։

Ի դեպ, բողոքական միսիոներներին հազիվ թե հետաքրքրեին «հայերի ազգային բնավորության, նրանց ապրելու կերպի ու սովորությունների» հանգամանքները։ Անգամ բուրժուական հեղինակները նշում են, որ ամերիկյան դպրոցները հիմնականում զբաղվում էին «ամերիկյան ապրելակերպի և արտադրանքի» պրոպագանդամբ»[60]։

Անդրադառնալով միսիոներների գործունեությանը, «Մուրճ» ամսագիրը գրում էր. «...բողոքականների դպրոցներում ամերիկյան միսիոներները ատելություն էին բորբոքում հայ-լուսավորչական հավատի, անտարբերություն ամեն հայկականի և սեր պատվաստում բողոքականության նկատմամբ։ Հայ բողոքականների հայրենիքը համարվում

էր Ամերիկան։ Բոլոր դասարաններում կախված էին Անգլիայի և Ամերիկայի քարտեզները և պարտադիր՝ ասույթներ «Աստվածաշնչից»[61]։

Այս փաստերը վկայում են, որ ամերիկյան միսիոներներն ուսումնական հաստատությունների միջոցով գաղափարապես մշակում էին երիտասարդությանը, դրանով իսկ նպաստելով պրոամերիկյան հոսանքի ձևավորմանը։ Ամերիկյան միսիոներների ամբողջ գործունեությունը կոչված էր դյուրացնել ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական էքսպանսիան Թուրքիայում։

Բանն այն է, որ միսիոներական դպրոցների որոշ շրջանավարտների միջավայրում տարածված էր այն «տեսությունը», թե միսիոներներն իրենց գործունեության մեջ առաջնորդվում էին քրիստոնեական այլասիրության գաղափարներով, չհետապնդելով ոչ մի շահադիտական նպատակ։ Այդ «տեսության» հետևողներից մեկը՝ Գ. Սաֆարյանը, կոչ էր անում հավատալ «նրանց մարդասիրական և քրիստոնեական նպատակների անկեղծությանը», հավաստիացնելով թե իբր, միսիոներները՝ ընդհանրապես և, բողոքականները. մասնավորապես նպատակ չունեին Արևմտյան Հայաստանում բողոքականություն տարածել։ Ըստ նրա, միսիոներները միայն ցանկանում էին հայերին մայրենի լեզվով «նոր կտակարանը» ուսուցանել և հայ հոգևորականությանը օգնել ժամանակի ոգուն համապատասխան բարեփոխել լուսավորչական եկեղեցին։ Ընդ որում Սարաֆյանը պնդում էր, թե միսիոներները հետամուտ էին ավելի ազնիվ նպատակի՝ լուսավորություն տարածել Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների շրջանում և, որ նրանցից հետո էր, որ «կրթության հայկական միավորված ընկերությունը» իր ներդրումը բերեց տարրական դպրոցների ցանցի ընդլայնման գործում»[62]։

Գնահատելով հայերի միջավայրում զանազան միսիոներական ընկերությունների գործունեությունը, Վ. Հայկը հավատացնում էր, թե միսիոներները, օրինակ «առաջնորդվելով կրոնական և մարդասիրական զգացմունքներով» ամեն ինչ անում էին հանուն հայ ժողովրդի բարության»[63], ամենևին չմտահոգվելով ո՛չ իրենց, ո՛չ էլ այն ամերիկյան հաստաքսակների մասին, որոնք ֆինանսավորում էին նրանց գործունեությունը։

Ավելին, նա պնդում էր, թե միսիոներների լուսավորական գործունեության շնորհիվ «հայ ժողովուրդը առնչվեց XX դ. քաղաքականությանը»։ Սակայն հայտնի իրողություն է, որ Հայաստանում դպրոցներ գոյություն ունեին վաղուց։ Կասկածից դուրս է, որ Օսմանյան կայսրությունում հայերի, հույների և քրիստոնյա այլ ժողովուրդների

լուսավորական գործի դրվածքը շատ ավելի բարվոք էր, քան Թուրքերինը։ Դրանում նրանք պարտական էին իրենց մշակույթի լուսավորական վաղեմի ավանդույթներին, բայց ոչ միսիոներական դպրոցներին։ Մի խոսքով, բանն այն է, որ ամերիկյան և այլ միսիոներների գործունեությունը շրջափուլ չէր ինչպես Արեմտյան Հայաստանի, այնպես էլ ամբողջ Օսմանյան կայսրության լուսավորական շարժման պատմության մեջ։ Այդ իսկ պատճառով, չժխտելով Թուրքիայի լուսավորության զարգացման մեջ միսիոներների գործունեության նշանակությունը, չի կարելի համամիտ չլինել հայ մեծ լուսավորիչ, հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի այս առթիվ արտահայտած կարծիքին. «Ամերիկյան միսիոնարների շարաշար ընթացքը Տաճկաստանի մեջ, մեր խեղճ ազգին տված հարվածները, և Քրիստոսի ավետարանը իրենց ձեռքում խաբեության գործիք շինելը դոքա տակավին հարյուրից մեկը չեն, ինչ որ հայտնի է լուսավոր մարդոց առհասարակ որսորդ միսոնարների վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին չէ...»[64]։ Եվ իրոք, միսիոներների լուսավորական, բարեգործական, մարդասիրական և այլ գործունեությունը հարյուր երրորդական մասն է կազմում այն ամեն բացասականի, որ նրանք բերեցին Արևելք։ Իզուր չէ, որ բնորոշելով միսիոներների գործունեությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք «...կողոպուտի քաղաքականությունը կեղծավորությամբ քողարկում էին քրիստոնեության տարածումով»[65]։

Վերը քննված փաստերը այս եզրակացության ևս մի խոսուն հաստատումն են։

Р. С. ДАНИЕЛЯН

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРОТЕСТАНТСКИХ МИССИОНЕРОВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ
(конец XIX—начало XX вв.)

Резюме

Статья посвящена проблемам идеологической экспансии капиталистических стран в Османской пмперин. Первоначально она проходила в форме учреждения в Турции миссионерских, филантропических и просветительских организаций, которые при непосредственной поддержке их государств занимались пропагандой культуры и языка своих стран. В статье подчеркивается, что их филантропические декларации скрывали далеко не альтру-

истические интересы колониальных держав—обеспечить свое экономическое и политическое влияние в Турции.

Автор подробно останавливается на деятельности американских миссионеров в Османской империи.

Объектом особого внимания капиталистических стран стали окраинные районы Турции угнетенные христианские национальности которой в результате ассимляторской, шовинистической политики султанского правительства постоянно находились под угрозой исламизации. Используя тяжелое положение нацменьшинств Османской империи и, в частности армян, миссионеры вели широкую пропаганду, обещая христианам, что с принятием протестанства они перейдут под покровительство их правительств, и тем самым отпадет угроза их насильственного уничтожения.

Деятельность протестантских миссионеров находила поддержку со стороны султанского правительства. Турецким правящим кругам было выгодно поддерживать религиозную разобщенность среди нацменьшинств, с тем чтобы расколоть их единство и таким образом ослабить национально-освободительное движение угнетенных народов.

1 Ա. Ալպոյաճեան, *Պատմություն հայ դպրոցի, Գահիրե, 1947, էջ 548։*

2 В. И. Семенов, Поездка в Малую Азию в 1901—1902 гг., СП., 1904, с. 136.

3 E. Mears, Modern Turkey, New York, 1924, p. 130:

4 М. Кемаль, Путь новой Турции, М., 1929, т. 1, с. 406.

5 В. Духовская. Из дневника русской женщины в Эрзеруме во время военного занятия его в 1878 г, СП., 1879, с. 23.

6 С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав, Ереван, 1967, с. 632.

7 Ա. Ալպոյաճեան, *Պատմությունը Եւդոկիոյ հայոց, Գահիրե, 1952, էջ 852։* Kirsehirlioglu E., Türkiyede misyoner faaliyetleri, Istanbul, 1963, s. 29:

8 Ա. Ալպոյաճեան, *Նշված աշխ., էջ 834—835։* Kirsehirlioglu E., *Նշված աշխ., էջ 25։*

9 Ա. Ալպոյաճեան, *Նշված աշխ., էջ 852։*

10 *Նույն տեղում, էջ 852—853։*

11 E. Mears, *Նշված աշխ., էջ 135։*

12 Ա. Ալպոյաճեան, *Պատմությունը Եւդոկիոյ հայոց, Գահիրե, 1952, էջ 853։* L. J. Gordon, American Relations With Turkey, 1830—1930. An Economic Interpretation, London—Philadelphia, 1932, p. 221:

13 *Թուրքիայում գործում էին նաև այլ երկրների միսիոներական դպրոցներ։ Միայն Կոստանդնուպոլսում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կային չորս իտալական, մեկ իրանական, երկու ռուսական, երեք ավստրիական և չորս գերմանական դպրոց։*

Բոլորից ավելի ուշ Մերձավորարևելյան մրցասպարեզ մտած Գերմանիան նույնպես ձգտում էր իր ռազմաքաղաքական և տնտեսական տիրապետությունը հաստատել Թուրքիայում։ Նա իր էքսպանսիան սկսեց Թուրքիային պարտադրված ռազմական օգնությամբ։ Շուտով Գերմանիան Բաղդադի երկաթուղագծի կառուցման կոնցեսիա ստացավ։ Գերմանիան ևս գաղափարախոսական ներթափանցումն իրագործում էր եկեղեցու և դպրոցի միջոցով։ 1896 թ. ստեղծվեց «Արևելքի քրիստոնեաների օգնության գերմանական մարդասիրական ընկերությունը», որի կենտրոնը գտնվում էր Մայնի Ֆրանկֆուրտում։ Գերմանական մեկ այլ «Արևելյան միսիա» անունը կրող ընկերությունը գլխավորում էր մեծ հայասեր դոկտոր Ե. Լեփսիուսը։

1913 թ. Թուրքիայում կային 5 գլխավոր բարեգործական և կրթական կայաններ (Խարփութում, Մարաշում, Մեղրիեում, Մուշում և Վանում), որոնց նպաստով գործում էին 10 միջնակարգ և 29 տարրական դպրոցներ (3400 աշակերտներով և 109 ուսուցիչներով)։' Տե՛ս Osman Ergin, Türkiye maarif tarihi, Istanbo 1943, c. IV. s. 1233—1234; АВПР, Ф. Посольство в Константинополе 1898—1913. д 5187, л 53, 61; «Արձագանք», 1892, № 32, E. Kirşehirioglu, Նշված աշխ., էջ 37—38; Վահրէ Հայկ. Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1939, էջ 453—456։

24 Ա. Ալպոյաճեան, Պատմությունը Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 843—844, V. N. Artinian, The formation of Catolic and Protestant Millets in Ottoman Empire.—„The Armenian Review," vol. 28, № 1(109), 1975, p. 9.

15 Невзат Устюн, Америка и американцы в Турции ,М., 1971, с. 9; Մանրամասն տե՛ս L. J. Gordon, Նշված աշխ., էջ 191—193, 210—211։

16 Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ-Եորք, 1934, էջ 655, H. G. O. Dwight, Christianity in Turkey: A Narrative of the protestant Reformation in Turkey: Church Constantinople—London, 1854, p. 32.

17 А. Убичини и П-де-Куртель, Современное состояние Оттоманской империи, перевод с французз.. СП., 1877, с. 198—199.

18 Ա. Ալպոյաճեան, Նշված աշխ., էջ 840—847։ H. G. O. Dwight, Նշված աշխ., էջ 44։

19 А. Д. Ерицев, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, Тифлис, 1882, с. 73.

20 H. G. O. Dwight, Նշված աշխ., էջ 291—292։

21 E. Kirşehirlioglu, Նշված աշխ., էջ 93; K. A. Sarafian, History of Education in Armenia, Caliphornia, 1939, p. 165:

22 АВПР, ф. Политархив, оп. 482, д. 538, 1904. л. 133, 135.

23 АВПР, Политархив. оп. 482, д. 540, 1906, л. 147. Վահէ Հայկ, Նշված աշխ., էջ 322, L. J. Gordon, Նշված աշխ., էջ 244:

24 А. М. Колюбакин, Деятельность протестантских миссий в северо-восточной части Азиатской Турции. —«Известия Кавказского отдела императорского русского географического общества», т. 9, вып. 1, Тифлис, 1885, с. 107.

25 Նույն տեղում, էջ 107։

26 *Նույն տեղում, էջ 108,* V. H. Artinian, *նշված աշխ., էջ 12։*

27 A. M. Колюбакин, *նշված աշխ., էջ* 126—127, 130; АВПР, ф. Турецкий стол (новый), 1911, д. 207, л. 5.

28 *Նույն տեղում, էջ 104,* АВПР, Турецкий стол (новый), 1911, д 207) л 3.

29 Kirehirlioglu E., *նշված աշխ., էջ 32։*

30 *«Արձագանք», 1882, № 9, էջ 131։*

31 A. Колюбакин, *նշված աշխ էջ 127։*

32 *Նույն տեղում, էջ 132։*

33 Я. С. Проскуряков, Заметки о Турции, —«Записки Кавказск. отд. императорского русского географ. общества», кн. XXV, вып. 1, Тифлис, 1905, с. 27.

34 *Հ.* Գալուստեան, *նշված աշխ., էջ 658։*

35 Յ. Յ. Չագմագճեան, *Ընդարձակ պատմութիւն հայոց սկզբեն մինչեւ մեր օրերը պատկերազարդ, Պոլիս, 1917, էջ 567,* V. H. Artinian, *նշված աշխ., էջ 10—11։*

36 A. Колюбакин, *նշված աշխ., էջ 111, 136։*

37 M. Кемаль, *նշված աշխ., էջ 405։*

38 A. Колюбакин, *նշված աշխ., էջ 107—108։*

39 E. Mears, *նշված աշխ., էջ 181—132;* A. Sarafian, *նշված աշխ., էջ 170—171;* Чернолуская, Несколько слов о народном образовании в Турции,— „Учитель и школа, „1914, № 19—20, с. 56; F. Ross, The Near East and American philanthropy, New-York, 1929, p. 156:

40 Северский мирный договор и акты, подписанные в Лозанне. Под ред. проф. Ключникова и проф. А. В. Сабанина, М., 1927, с. 254; Mukerrem Kamil Su, Türkiye cumhuriyet tarihi, Istanbul, 1957, *էջ 134;* „*Մարմարա*", 22·VIII·1925. W. Gerard, The Chester oil Concession and the Lausane Treaty: „The Armenian Review", vol. 28, № 1(109), *էջ 29։*

41 Լ. Զօրմիսեան, *նշված աշխ., էջ 560;* Վահե Հայկ, *նշված աշխ., էջ 409—411, 420։*

42 А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции (конец XVIII—начало XX в.), М., 1965, с. 134.

43 O. Ergin, *նշված աշխ., էջ 1751։ «Ռոբերտ-կոլեջում», օրինակ. 1863—1903 թթ. ոչ մի թուրք չի սովորել։ Այդ նույն ժամանակաընթացքում հիշյալ կոլեջն ավարտել են 195 բուլղարացի, 144 հայ, 76 հույն, 2 հրեա և 17 ամերիկացի։ Ամերիկյան կանանց դպրոցի շրջանավարտների մեջ արձանագրված էին երկու թուրքուհիների անուններ։ Միայն երիտթուրքական հեղափոխությունից հետո թուրքերի թիվը նկատելի չափով ավելացավ։ ԱՄՆ-ի կառավարող շրջանները ձգտում էին մեծ թվով թուրքերի ներգրավել ամերիկյան դպրոցների մեջ, որպեսզի հանձինս նրանց ունենան ամերիկյան մշակույթի և գաղափարախոսության կրողներ։ Մյուս կողմից թուրքական կառավարող շրջանները ևս շահագրգռված էին ավելի մեծ թվով թուրքազգի գրագետ կադրեր ունենալ։ Թուրքիայում հանրապետական կարգերի հաստատումից հետո օտարերկրյա դպրոցներում սովորողների ազգային կազմը արմատապես փոխվեց։ Այսպես, արդեն 1928—1929 թթ. «Ռոբերտ-կոլեջի» 700 ուսանողներից 532-ը թուրք էին (սովորողների 76%)։*

„The Middle East Journal," 1951, № 3 p. 293 M. Кемаль, Путь новой, Турции, т. 1, с 313.

44 O. Ergin, նշված աշխ., էջ 648։

45 Բաղված է՝ А. Д. Желтянов. Ю. А. Петросян, նշված աշխ., էջ 134։

46 Մանրամասն տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, նշված աշխ., էջ 140—143։

47 К. Д. Мачавариани, Колледж Роберта в Константинополе. Батум, 1902, с. 4—9.

48 Е. Чернолуская, նշված աշխ., էջ 358—359։

49 Վահե Հայկ, նշված աշխ., էջ 358—359։

50 АВПР, ф. Посольство в Константинополе, 1901, д. 5803, л. 15.

51 Լ. Սարգսեանց, Այլ Թուրքաց Հայաստանին,—«Մուրճ», 1889, № 11, էջ 1726։

52 Е. Чернолуская, նշված աշխ., էջ 56։

53 А. Колюбакин, նշված աշխ., էջ 112.

54 Նույն տեղում, էջ 120—121։

55 Նույն տեղում, էջ 115։

56 Նույն տեղում, էջ 116։

57 «Արեւակ», 1860, № 91, էջ 222—223, «Ժամանակ», 1864, № 44, էջ 141։

58 Ա. Ալպոյաճեան, նշված աշխ., էջ 869։

59 А. Колюбакин, նշված աշխ., էջ 111։

60 L. J. Gordon, նշված աշխ., էջ 244։

61 Լ. Սարգսեանց, նշված աշխ.,«Մուրճ». 1889, № 11, էջ 1721—1722։

62 K. A. Sarafian, նշված, աշխ., էջ 169։

63 Վահե Հայկ, նշված աշխ., էջ 427, 320։

64 Մ. Նալբանդյան, եկ, Երևան, 1949, հ. 4, էջ 304

65 Վ. Ի. Լենին, եկ, հ. 4, էջ 476։